ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 հուլիսի 2011 թվականի N 75-Ա

ք. Հրազդան

Հ. ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 1187-Ն որոշման 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի մայիսի 3-ի N 478-Ն հրամանով հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգողների ընտրության մրցութային հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի N 2 որոշումը և *Հ. Աղաջանյանի* անձնական դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Հասմիկ Աղաջանյանին*** 2011 թվականի հուլիսի 20-ից երեք տարի ժամկետով նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգող:

Աշխատավարձը՝ ընկերության տնօրենի աշխատավարձի 90 տոկոսի չափով:

2. ***Հասմիկ Աղաջանյանին*** երեք տարի ժամկետով համատեղությամբ նշանակել նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ջովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության, <<Արգելի առողջության կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերության և <<Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգող:

Աշխատավարձը՝ յուրաքանչյուր համատեղության վայրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության, <<Ջովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության, <<Արգելի առողջության կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերության և <Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեններին՝ ***Հասմիկ Աղաջանյանի*** հետ կնքել համապատասխան աշխատանքային պայմանագրեր:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ